## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՄԱՆ
## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

*ք. Երևան* *«01» փետրվարի 2016թ.*

*«Էրկա Սթայլ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Կ. Ջանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և « ՀՀ ԿԳՆ Արարատի պետական քոլեջ » ՊՈԱԿ-ն այսուհետ «Պատվիրատու» ի դեմս տնօրեն Է. Գասպարյանի , որը գործում է կանոնադրության հիման վրա միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:*

### 1. Պայմանագրի առարկան

*1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է կատարել գովազդային պաստառների տպագրման և այլ տարատեսակ գովազդային աշխատանքներ, նորմայով սահմանված գների, չափերի հաշվի առնելով պետական տառադարձները:*

*1.2. Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պատվերը ընդունելուց 20 /քսան/ օր:*

*1.3.*

### 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

***2.1. Կատարողը պարտավոր է.***

*2.1.1. Աշխատանքները մատուցել պատշաճ որակով,*

*2.1.2. Աշխատանքների մատուցման արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին,*

*2.1.3. Պատվիրատուի պահանջով 5/հինգ/ օրվա ընթացքում անհատույց վերացնել Աշխատանքներում հայտնաբերված բոլոր թերությունները,*

*2.1.4. Աշխատանքները մատուցել ամբողջ ծավալով՝ Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան,*

*2.1.5. չհրապարակել Պատվիրատուի՝ Պայմանագրի կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած Բանկային և /կամ/ առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, հակառակ դեպքում Պատվիրատուին հատուցել դրա հետևանքով վերջինիս կրած բոլոր վնասները, ներառյալ բաց թողնված օգուտը:*

***2.2. Պատվիրատուն պարտավոր է.***

*2.2.1. Աշխատանքների դիմաց Կատարողին վճարել Պայմանագրի 3-րդ գլխով սահմանված կարգով:*

***2.3. Պատվիրատուն իրավունք ունի.***

*2.3.1. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կատարողի մասնակցությամբ, զննել և ընդունել կատարված աշխատանքների արդյունքը, իսկ դրանում թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղյակ պահել Կատարողին՝ պահանջելով 5 / հինգ/ օրվա ընթքացքում անհատույց վերացնել դրանք:*

*2.3.2. ցանկացած ժամանակ միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 2/երկու/ օր առաջ գրավոր տեղեկացնելով Կատարողին և վերջինիս վճարելով մինչև այդ նրա կողմից կատարված աշխատանքների համար, եթե լուծումը պայմանավորված չէ Կատարողի կողմից պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:*

*2.4. աշխատանքները համարվում են կատարված Պատվիրատուի լիազոր ներկայացուցչի կողմից աշխատանքենրի հանձման-ընդունման ակտի ստորագրման պահից:*

*2.4.1. Եթե Պատվիրատուն գտնում է, որ աշխատանքները թերի են մատուցված, իրավունք ունի չստորագրել հանձման-ընդունման ակտը և համապատասխան դիտողություններով այն հետ վերադարձնել Կատարողին:*

### 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

*3.1. Սույն Պայմանագրվ նախատեսված աշխատանքների ընդհանուր գինը ամփոփվում է կատարողի կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրում:*

*3.2. Հաշվապահական ծնակերպումները կատարվում են ըստ ներկայացված հաշիվ ապրանքագրի , որտեղ նշված է կատարված աշխատանքների քանակը, գինը , ընդհանուր գումարը:*

*3.3. Պայմանագրի գինը Պատվիրատուն Կատարողին է վճարում աշխատանքների հանձնման-ընդունման ակտը և Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացված համապատասխան հաշիվ ապրանքագիրը երկկողմանի ստորագրվելուց հետո 5 /հինգ/ բանկային օրվա ընթացքում՝ գումարը փոխանցելով Կատարողի՝ Պայմանագրի 7-րդ գլխում նշված հաշվեհամարին:*

### 4. Կողմերի պատասխանատվությունը

*4.1. Վճարները ուշացնելու համար Պատվիրատուն Կատարողին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ կետանցված գումարի 0.1 %-ի չափով, բայց ոչ ավել քան վճարման ենթակա գումարի 10 /տաս/ տոկոսի չափով:*

4.2. աշխատանքների կատարման ժամկետների կետանց թույլ տալու դեպքում Կատարողը Պատվիրատուին, վերջինիս գրավոր պահանջի դեպքում, կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ Պայմանագրի գնի 0.1 %-ի չափով, իսկ 5 /հինգ/ և ավելի օր ժամկետանց թույլ տալու դեպքում՝ նաև տուգանք՝ Պայմանագրի գնի 10 /տաս/ տոկոսի չափով:

4.3. Աշխատանքները ոչ պատշաճ մատուցելու կամ չմատուցելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ Պայմանագրի գնի 10 /տաս/ տոկոսի չափով, ինչպես նաև պարտավորվում է Պատվիրատուին հատուցել նաև դրա հետևանքով վերջինիս կրած բոլոր վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

4.4. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման այլ դեպքերի համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5. Տուժանքների վճարումը Կողմերին չի ազատում նրանց պարտավորությունների կատարումից:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

5.1. Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ/ կանխարգելել:

5.2. Անհաղթահարելի ուժի ի հայտ գալու դեպքում, Կողմը, որի պարտավորությունների պատշաճ կատարմանը խոչընդոտում է անհաղթահարելի ուժը, պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին, որն իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 1 /մեկ/ օր առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին, եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 1 /մեկ/ ամսից ավելի:

**6. Այլ դրույթներ**

6.1. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

6.2. Պայմանագրի բոլոր փոփոխություններ և/կամ լրացումները կատարվում են երկկողմանի ստորագրված գրավոր փաստաթուղթ կազմելու ձևով:

6.3. Պայմանագրով ծագած տարաձայնություններն ու վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը:

6.5. Պայմանագիրը կազմված է 2 /երկու/ հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

**7. Կողմերի իրավաբանական հասցեները և ստորագրությունները**

<u>«Կատարող»</u>

«Էրկա Սթայլ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Դ. Անհաղթի 5
h/h 163058002573
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 00087998
Հեռ 010285054

Տնօրեն Կ. Ջանյան

Կ.Տ

<u>«Պատվիրատու»</u>

« ՀՀ ԿԳՆ Արարատի պետական Քոլեջ» ՊՈԱԿ

h/h 1150012303390100
« Հայբիզնեսբանկ » ՓԲԸ
ՀՎՀՀ 04000082

Տնօրեն Է. Գասպարյան

Կ.Տ

# Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Ապրիլ | 2017 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 27 | Ապրիլ | 2017 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 2104264975 |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | |

| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
|---|
| |

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 0 | 0 | 8 | 7 | 9 | 9 | 8 |

| | | |
|---|---|---|
| [9] Անվանումը | «ԷՐԿԱ ՄԹԱՅԼ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [10] Բանկային տվյալները | ՀԷՐ ԲԲԸ Արաբկիր մ/ճ | N 163058002573 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՀՐ.ՔՈՉԱՐԻ 14/3 19 | |
| [12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ք.Երևան, Դավիթ Անհաղթի 5 | |
| [13] Լրացուցիչ տվյալներ | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 4 | 0 | 0 | 0 | 0 | 8 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| [15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀՀ ԿՐԹ ԵՎԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻՊԵՏ.ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | |
| [16] Բանկային տվյալները | Էյչ Էս Բի Սի Հայաստան ՓԲԸ | N 1150012303390100 | |
| [17] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 | | |
| [18] Լրացուցիչ տվյալներ | | | |
| [19] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [20] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 | | |

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | գովազդային պաստառների տպագրություն | ք.մետր | 7 | 2500 | 17500 |
| Ընդամենը | | | | | 17500 |

Առաքող` VARDANYAN LUSINE 5107820765
(անունը, ազգանունը)

Ստացող TSERUNYAN ZHALETA 6311410079
(անունը, ազգանունը)

27/04/2017 13:26:12

28/04/2017 10:07:10

28.04.2017

218 / 5211 +?